


ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԼԱՆՁՆ

Posted on July 10, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Շերքելի տեսագրութիւնը պատրաստուած է Hyeid Քալիֆորնիոյ Կլենտել եւ Թահանկա հայահոծ քաղաքներու մասնաճիւղերու նախաձեռնութեամբ, որպէսզի Խանասորի արշաւանքի 125-ամեակի առիթով օժանդակեն բարեգործական ծրագրի մը: Hyeid-ն նպատակ ունի դպրոցական ծրագիր մը իրագործել վտանգուած Սիւնիքի տարածքին: Դոկտ. Մինաս Գոճայեան ընդառաջելով իրեն ուղղուած հրաւերին, ելոյթ մը ունեցաւ այս առթիւ:

Խանասորի քարտէսը



Խանասորի արշաւանքը տեղի ունեցաւ 1897 Թուականի Յուլիս 25-ին թշնամիին եւ անոր հետ գործակցած ուժերուն դէմ: ՀՅ ֆետայիները Նիկոլ Դումանի ղեկավարութեամբ պատժիչ արշաւանք մը կազմակերպեցին 253 ֆետայիներով, որոնց

Մեջ կային նաեւ Արմենական եւ Հնչակեան ֆեոդալներ: Տաւօք սրտի այս արշալանքը եւ այլ նմանատիպ զինեալ գործողութիւններ կուսակցականացուած են կամ յաղթանակի վարկը տրուած է բացառապէս սա կամ նա կուսակցութեան: Տաւօք, տեսնուած է նաեւ հետեւեալ երեւոյթը, ուր մրցակից կողմին յաղթանակը փորձուած է նսեմացնել: Խանասորի պարագային տեսակետներ յայտնուած են նաեւ թէ հայերը չեն խնայած նաեւ կանանց եւ երեխաներուն, մինչդէռ թշնամի ցեղին առաջնորդը ազատած է ... կանացի շորեր հագած փախուստով: Դոկտ. Մ. Գոճայեան սոյն անպաճոյճ ներկայացմամբ հանրութիւնը տեղեակ կը պահէ այս դէպքի առնչութեամբ՝ յոյս ունենալով որ ցուցաբերուած ոգին վարակիչ ըլլայ նաեւ ԱՅՍՕՐ:

<https://www.youtube.com/watch?v=X36-sowt6W0>

**Դոկտ. Մինաս Գոճայեանի ներկայացումին սկիզբը 8:08-ին
Երիզահանուած 24 Յունիս 2022-ին**



ՎԱՆ ԲՎՂԱԹԻ ՄԻՋՆԱԲԵՐՂԻ ԱՅԳԵՍՏԱՆԵՆ ԴԻՏՈՒԱԾ

Comments



Լուսիկ – 2022-07-18 06:10:24

Մեր ազգի մեջ հենց այս բաժանումը կուսակցությունների միջև հանդիսացավ մեր պառակտման պատճառը, դաշնակակցական կուսակցությունն ունենալով ավելի մեծ քանակությամբ հետևորդներ, այդ պառակտման առաջին մեղավորներից մեկն է: Այսօր նրանք ոչ միայն պառակտում են մեր ազգին այս օրհասական պահին, այլ 30 տարի շարունակ սատարելով հանցագործ ու թալանչի քոչին ու սերճոյին մեր երկիրը հասցրեցին այս անմխիթար ու քայքայված վիճակին: Կարծում եմ այս կուսակցությունն իր շարքերը պետք է մաքրի կործանման տանող քերական ու սերճական հետևորդներին: